«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Ինքնուրույն ընթերցանության դերը կրտսեր դպրոցականի ճանաչողական գիտելիքների հարստացման գործում

ԱՌԱՐԿԱ Դասվար

ՀԵՂԻՆԱԿ Աննա Հարությունյան

ՄԱՐԶ Կոտայքի մարզ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Քաղսիի միջնակարգ դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……..3

1. ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՁԵՎԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ …….. 4

2. ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՀԱՐՍՏԱՑՄԱՆ ԽՆԴՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԻՄ ՓՈՐՁԸ ……. 8

2. 1 Դասի վերլուծություն (2-րդ դասարան)……11

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ…… 22

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ…… 24

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Ուսումնասիրության թեման արդիական է երկու առումով՝

1) ընթերցասեր սերնդի դաստիարակությունը և հետևաբար ընթերցող հասարակության ձևավորումն այսօր արդիական խնդիր է ամբողջ աշխարհում. այդ գործընթացում մեծ է մայրենի լեզվի ուսուցման և դրա ներսում՝ ինքնուրույն ընթերցանության բաղադրիչի կատարած դերը, քանի որ երեխային գրքին կապելու և դրա շնորհիվ ճանաչողական գիտելիքների հարստացման տեսանկյունից ինքնուրույն ընթերցանությունը, կարևոր նշանակություն ունի:

2) Մյուս կողմից՝ դիտարկվում է ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ աշակերտի՝ ինքնուրույն աշխատանք կատարելու հմտությունն ու ճանաչողական ունակությունների զարգացումը: Հարկ է նկատել, որ ինքնուրույն ընթերցանությունը մեծ ազդեցություն ունի երեխայի մտածողության զարգացման ու անհատականության ձևավորման գործում, իսկ ինքնուրույն աշխատանք կատարելու հմտությունը զարգանում է անհատական և խմբային ուսումնական գործունեության բազմազան տեսակների կիրառմամբ, որոնք նրանք կատարում են տանը և դպրոցում: Այդ ընթացքում ուսուցչի հիմնական գործառույթը սովորողների ինքնուրույն ճանաչողական գործառույթների կառավարումն է:

Հետազոտության նպատակը: Հետազոտության նպատակն է բացահայտել ինքնուրույն (կամ արտադասարանական) ընթերցանության նշանակությունը կրտսեր դպրոցականների ճանաչողական գիտելիքների հարստացման և ճանաչողական ունակությունների զարգացման գործում:

Հետազոտության հիմնախնդիրը: Մեր հետազոտության հիմնախնդիրը մայրենիի և ինքնուրույն ընթերցանության դասաժամերին ստեղծագործությունների վերլուծությամբ և քննությամբ կրտսեր դպրոցականի ճանաչողական ունակությունների ձևավորումն ու գիտելիքների հարստացումն է:

1. ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՁԵՎԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Սովորողների՝ կարդալու տեխնիկան և տեքստը վերլուծելու կարողությունը զարգացնելու և ընթերցանության գործընթացի նկատմամբ հետաքրքրություն առաջացնելու համար անհրաժեշտ է նպատակաուղղված և համակարգված աշխատանք իրականացնել՝ սկսելով կարդալու կարողության ձևավորման նախափուլից[1]:

Դասարանից դասարան ուսումնական ծրագրերը բարդանում են՝ ավելի բազմակողմանի ընդգրկում ստանալով և ելնելով երեխայի կրթության ու դաստիարակության պահանջներից: Ընթերցանության կարևոր խնդիրը նաև երեխայի բառապաշարի հարստացումը, մայրենիի քերականական և շարահյուսական կառույցների յուրացումն ու զարգացումն է[2]:

Դասագիրքը երեխային միայն ընդհանուր տեղեկություն է տալիս, մնացած գիտելիքները նա պետք է ձեռք բերի ինքնուրույն կարդալու միջոցով: Այսինքն՝ դասարանային ընթերցանությունը սահմանափակ է, չի կարող ուսումնական բոլոր խնդիրներն ու նպատակներն իրագործել: Այս առումով արտադասարանային կամ ինքնուրույն ընթերցանության դերը բացառիկ է: «Երեխաներին գեղարվեստական գրականության հետ կապելու, հոգեկան հարստությունների այդ մեծ ու անսպառ շտեմարանի բանալին նրանց ձեռքը տալու լավագույն միջոցը արտադասարանային ընթերցանությունն է, որի կազմակերպման ու ղեկավարման պարտականությունը դրված է հայոց լեզվի ուսուցչի վրա, չնայած գործում մեծ անելիքներ ունեն նաև երեխայի շրջապատը և նրա ծնողները»[3]:

Արտադասարանային ընթերցանության կազմակերպումը տարրական դասա-

---

[1] **Ա. Գալստյան, Ա. Բալայան և ուրիշներ**, Ինքնուրույն ընթերցանության ձեռնարկների մեթոդական կառույցը՝ որպես սովորողների հասկանալով կարդալու կարողության ձևավորման միջոց, Տարրական դպրոցի զարգացման հեռանկարները 21-րդ դարում, Երևան, 2014, էջ 88:

[2] **Լ. Ավագյան**, Ինքնուրույն ընթերցանությունը որպես կրտսեր դպրոցականի մտածողության զարգացման միջոց, «Մանկավարժության զարգացման հիմնախնդիրները» տարածաշրջանային միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2015, էջ 35:

[3] **Ա. Տեր-Գրիգորյան,** Արտադասարանային ընթերցանությունը տարրական դասարաններում, մեթոդական ցուցումներ, Երևան, 1973, էջ 16:

բաններում առանձնահատուկ դժվարությունների հետ է կապված: Դրանք հիմնականում պայմանավորված են երեխաների մեջ դեպի գիրքը սեր արթնացնելու դաստիարակչական-հոգեբանական աշխատանքի և երեխաների մեջ կարդալու տեխնիկայի թույլ զարգացած լինելու խոչընդոտների հաղթահարման հետ: Հարկ է նկատել, որ ուսուցիչները արտադասարանային կամ ինքնուրույն ընթերցանությունը դիտարկում են որպես դասարանային ընթերցանության շարունակություն և որոշակի կախման մեջ են դնում դրանից՝ թեմատիկայի ու բովանդակության տեսանկյունից այն սերտորեն կապելով ծրագրային նյութերին: Նշված հանգամանքն ունի իր դրական ու բացասական կողմերը: Ճիշտ է, այս դեպքում կտրուկ բարձրանում են ինքնուրույն ընթերցանության նպատակայնությունն ու արդյունավետությունը, քանի որ այն մեծապես նպաստում է ծրագրային նյութերի բազմակողմանի ու խոր յուրացմանը, սակայն սկզբունքորեն սահմանափակում է նաև երեխաների ինքնուրույն աշխատանքը, նրանց անհատական հետաքրքրությունների ու հակումների հետագա զարգացումը:

Ինքնուրույն ընթերցանության ժամերի կազմակերպումը կարևոր նշանակություն ու դերակատարում ունի հատկապես «Մայրենիի» դասընթացում: Ինքնուրույն ընթերցանության մեթոդիկայի ուսումնասիրումը ևս արդիական նշանակություն ունի: Ցանկացած ընթերցանություն նպատակային է և գիտակցական, եթե ընթերցանության ժամանակ աշակերտների մեջ ծագում են տարաբնույթ վարկածներ այն մասին, թե ինչ է ինքը կարդալու, ձգտում են հասկանալ, թե ինչի մասին է խոսքը գնալու: Ընթերցանության ընթացքում, երբ աշակերտը կարդում է, նա «իր վրա է վերցնում» կարդացածն իմաստավորելու, նրա մեջ գաղափար դնելու առաջատար դերը: Նշված գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է ինչպես աշակերտի ունեցած գիտելիքների պաշարով, այնպես էլ ուսուցչի գործոնով, նրա օգնությամբ:

Մայրենիի դասերի պարբերաբար լսումներն ու քննարկումները ցույց են տալիս, որ գեղարվեստական բնագրի ընթերցումը պետք է կազմակերպվի որոշակի մեթոդներով, որպեսզի անարդյունավետ ու ձանձրալի չլինի: Սովորաբար ընթերցանության մեթոդի բաղադրատարրեր են դառնում՝

1.զրույցը,

2.բնագրի ընթերցումը,

3.բառային աշխատանքը,

4.պատմումը,

5.ամփոփումը[4]:

Սովորողների ընթերցման գնահատումը պայմանավորված է ձեռք բերած որակական հատկանիշներով, որոնցով պայմանավորված է ինքնուրույն ընթերցանությունը: Այդ որակներն են՝

1.ճիշտ կամ անսխալ կարդալ,

2.հասկանալով կամ գիտակցորեն կարդալ,

3.վարժ կամ սահուն կարդալ,

4.արտահայտիչ կամ գեղարվեստորեն կարդալ,

5.արագ կարդալ:

Բացի դրանից՝ ընթերցանության դասերը պետք է համակարգված լինեն ըստ նյութերի բնույթի և ժանրի: Դասերի ընթացքում անհրաժեշտ է սովորողներին նախապատրաստել նոր նյութի ընկալմանը: Տեքստի շուրջ աշխատանքը պետք է կազմակերպել այնպես, որ բոլոր սովորողները պատկերացնեն, գիտակցեն ներկայացված իրադարձությունները, հասկանան դրանց բովանդակությունը, գեղարվեստական միջոցները և ստեղծագործության հիմնական իմաստը: Սրանով էլ պայմանավորված է դասի հիմնական փուլերի առանձնացումը, որոնց թվում են՝ նախապատրաստումն ընթերցանությանը, ստեղծագործության առաջին ընթերցումը, տեքստի շուրջ աշխատանքը, պատկերացումների ամրապնդումն ու ընթերցած տեքստի հիմնական իմաստի ընկալումը[5]:

Մեթոդիկայում մշակված են մի շարք հնարներ, որոնք նպաստում են ընթերցած ստեղծագործությունը խորությամբ ըմբռնելուն.

ա. դիտարկել և մեկնաբանել ստեղծագործության վերնագիրը,

բ. առանձնացնել հենակետային (բանալի) բառերն ու արտահայտությունները,

գ. վերլուծել բնագիրն ու պարզաբանել հիմնական գաղափարը, ենթատեքստը և այլն[6]:

Հատկապես կարևորվում է նոր նյութի ընթերցանության նախապատրաստումը դասին: Դրա բնույթը որոշվում է դասի նպատակներով, ստեղծագործության բովան-

---

[4]**Ջ. Գյուլամիրյան,** Տարրական դասարաններում արտադասարանական ընթերցանության կազմակերպման խնդիրները և մեթոդները, «Նախաշավիղ», 2001, N1, էջ 22:

[5]**Ա. Տեր-Գրիգորյան,** Ընթերցանության մեթոդիկա, Երևան, 1978:

[6]**Ջ. Գյուլամիրյան,** Տարրական դասարաններում արտադասարանական ընթերցանության կազմակերպման խնդիրները և մեթոդները, «Նախաշավիղ», 2001, N1, էջ 22:

դակությամբ, թեմայի շուրջ երեխայի ունեցած գիտելիքների առկայությամբ: Ընթերցանության ճիշտ կազմակերպված մուտքը նպաստում է, որ սովորողները առաջադրվող թեմայի նկատմամբ դրսևորեն հետաքրքրություն և որոշեն ընթերցման նպատակը: Նշված երկու գործոնները՝ հետաքրքրությունն ու նպատակը, կարևոր են սովորողների ակտիվության տեսանկյունից: Ուսումնական գործունեության արդյունավետությունը պայմանավորված է նաև սովորողների նպատակներով: Արդյունավետությունը ցածր է, եթե աշակերտները չեն դրսևորում թեմայի նկատմամբ կայուն հետաքրքրություն:

Անհրաժեշտ է նաև, որ աշակերտները կարողանան ընթերցված նյութերից փաստեր ու տեղեկություններ քաղել և ապացուցելով դրանք՝ զարգացնեն ընդհանրացումներ և համադրումներ անելու կարողությունները[7]: Օրինակ՝ «Հայոց հրաշքը՝ Մեսրոպ Մաշտոց» ընթերցելիս աշակերտներին հարց է տրվում՝ ինչու Մաշտոցը ստեղծեց հայոց գրերը: Նման հարցադրումների պատասխանելիս աշակերտները հարկադրված են լինում մեկ անգամ ևս ինքնուրույն ընթերցելու դասանյութը կամ դասի համապատասխան հատվածը: Իսկ դա նպաստում է տվյալ թեմայի շրջանակներում ինքնուրույն կողմնորոշվելու զարգացմանը:

Կրտսեր դպրոցականին սովորեցնել պարզ և հստակ շարադրել մտքերը, համապատասխան բառերով արտահայտել իր պատկերացումները. բավականին դժվար գործընթաց է և ուսուցչից մեծ ջանքեր է պահանջում: Այս դեպքում կարևորվում են մեթոդական կառույցում ընդգրկված քայլերը, որոնք ուղղված են ճանաչողական գիտելիքների ամրապնդմանն ու ինքնուրույն մտածողության զարգացմանը:

Այսպիսով՝ ինքնուրույն ընթերցանությունը սովորողների ինքնուրույն ուսումնական գործունեության կազմակերպման ձևերից է, որը նպաստում է.

1.ինքնուրույն և ստեղծագործական գործնական կարողությունների զարգացմանը,

2.վերլուծական հմտությունների դրսևորմանը,

3.ստեղծագործական դաստիարակչական կողմի ընկալմանը,

4.կրթության՝ ընդհանուր ճանաչողության զարգացմանը և այլն :

2. ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՀԱՐՍՏԱՑՄԱՆ ԽՆԴՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԻՄ ՓՈՐՁԸ

Աշխատանքիս մեջ դիտարկել եմ ինքնուրույն ընթերցանության անցկացման ձևերն ու մեթոդները 2-րդ դասարանում: Աշակերտների և ուսուցիչների շրջանում անցկացրել եմ հարցում՝ բացահայտելու համար ընթերցանության դերը մայրենիի դասընթացում, մասնավորապես աշակերտների մտածողության, տրամաբանության զարգացման, ճանաչողական ունակությունների հարստացման գործում:

Աշակերտների շրջանում անցկացված հարցումը ցույց է տալիս, որ ինքնուրույն ընթերցանությունը կարևոր դերակատարում ունի կրտսեր դպրոցում և նպաստում է կրտսեր դպրոցականի մտավոր զարգացմանը, ճանաչողական գիտելիքների հարստացմանն ու ճանաչողական ունակությունների զարգացմանը: Այդ տարիքում է երեխայի մեջ արթնանում սեր գրքի ու ընթերցանության նկատմամբ: Աշակերտների շրջանում (3-4-րդ դասարանների 16 աշակերտներ) անցկացված հարցումը ցույց է տալիս, որ կրտսեր դպրոցականներից շատերի համար գիրք ընթերցելը ընկալվում է որպես հաճելի զբաղմունք: Այդ հարցում կարևոր դեր են կատարում ուսուցիչները, որոնք արտադասարանական կամ ինքնուրույն ընթերցանության նյութերը, բնագրերը կապում են դասարանային ընթերցանության նյութերին ու թեմաներին՝ բարձրացնելով աշակերտների՝ ընթերցանության նկատմամբ ունեցած հետաքրքրությունը: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այս տարիքի աշակերտների ընթերցողական ունակությունների ու հետաքրքրությունների շրջանակում նշանակություն ունեն նաև ինքուրույն ընթերցանության համար նախատեսված դասագրքերի կազմը, բնագրին առնչվող նկարազարդումները և այլն: Բնագրերի բովանդակության նկատմամբ հետաքրքրությունը հաճախ առիթ է դառնում, որ աշակերտները տեղեկություններ փնտրեն բնագրի կամ տվյալ ստեղծագործության հեղինակի կամ ստեղծագործության հերոսի մասին, ինչը ևս փաստում է, որ ինքնուրույն ընթերցանությունը կարևոր դեր ունի ճանաչողական ունակությունների ձևավորման և գիտելիքների հարստացման

գործում: Հաճախ էլ, երբ երեխան հատված է ընթերցում որևէ ստեղծագործությունից, ցանկություն է ունենում կարդալու ստեղծագործությունն ամբողջությամբ, ինչը ևս շատ կարևոր փաստ է:

Արտադասարանական և ինքնուրույն ընթերցանությունը նպաստում է նաև աշակերտների համագործակցային ունակությունների զարգացմանը, քանի որ որևէ ստեղծագործության ինքնուրույն ընթերցումը հետագայում նաև հետաքրքրիր քննարկումների առիթ է տալիս կրտսեր դպրոցականներին: Աշակերտներին առավելապես գրավում է ինքնուրույն ընթերցանության անցկացման խմբային եղանակը, երբ միասին ընթերցելը դառնում է միասին նույն զգացումներն ապրելու, միասին խորհելու, ուրախանալու և տխրելու առիթ ու հնարավորություն:

Ընթերցանության նկատմամբ հետաքրքրությունն ավելանում է, եթե ընթերցանության նյութերն ունեն հետաքրքիր բովանդակություն: Այս առումով կարևորվում է ուսուցչի դերը, որին է վերագրված ինքնուրույն ընթերցանության նյութերն ընտրելն ու աշակերտներին հանձնարարելը:

Ինքնուրույն ընթերցանությունը նշանակություն ունի նաև աշակերտների ստեղծագործական ունակությունների զարգացման գործում, քանի որ որոշ աշակերտների մոտ գրքեր, ստեղծագործություններ ընթերցելը նաև ստեղծագործելու տրամադրությամբ է համակում:

Արտադասարանական կամ ինքնուրույն ընթերցանությունը նպաստում է բազմակողմանի զարգացած անհատի ձևավորմանը, նրա խոսքի մշակույթի, գեղարվեստական ճաշակի ձևավորման կարևոր նախադրյալ է դառնում:

Կարևորվում է նաև ճանաչողական գիտելիքների հարստացման հարցը, ինչը կարող է դրսևորվել տարբեր բնագավառներում. պատմական, բնագիտական, ազգագրական, գեղագիտական և այլն՝ պայմանավորված ստեղծագործության բնույթով, ժանրով, բովանդակությամբ: Ընդ որում՝ ճանաչողական գիտելիքները սովորողները կարող են ձեռք բերել ինչպես անմիջապես ընթերցանության համար հանձնա-

բարվող ստեղծագործությունից, այնպես էլ դասագործընթացում, երբ ուսուցիչը, օգտվելով այդ ստեղծագործության ընձեռած հնարավորությունց, թեմատիկային համահունչ աշխատանքներ է կատարում՝ ընդլայնելով կամ ամրակայելով այս կամ այն հարցի վերաբերյալ ունեցած գիտելիքները: Ճանաչողական գիտելիքների համալրմանը կարող է նպաստել նաև նկարազարդումը. այս դեպքում ուսուցիչը կարող է ուղղորդել աշակերտներին՝ հատուկ ուշադրություն դարձնել նկարների վրա, ուսումնասիրել դրանք:

Ուսուցիչների շրջանում անցկացված հարցումը փաստում է, որ ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների դարաշրջանում դժվար է երեխաներին ստիպել կամ հանձնարարել գիրք ընթերցել: Վիրտուալ աշխարհը նվազեցնում է ընթերցանության նկատմամբ սերն ու հետաքրքրությունը, սակայն ճիշտ մեթոդների ու մոտեցումների գործադրումը, արտադասարանական ու դասարանական ընթերցանության նյութերի համադրումը կարող է բարձրացնել ընթերցանության նկատմամբ հետաքրքրությունը: Այս դեպքում ընթերցանությունը չի դառնում պարտադրանք: Ուսուցիչները կարևորում են ինքնուրույն ընթերցանության դերը հատկապես մտածողության ու ճանաչողական ունակությունների զարգացման գործում: Ստեղծագործությունների շուրջ ծավալվող քննարկումները նպաստում են ոչ միայն աշակերտների խոսքի զարգացմանը, այլև մարզում են նրանց հիշողությունը, համալրում են աշակերտների բառապաշարը: Ուսուցիչների կարծիքով ևս՝ բնագրերին ու ստեղծագործություններին առնչվող նկարազարդումները դրական նշանակություն ունեն ընթերցվող նյութերի նկատմամբ հետաքրքրություն առաջացնելու առումով: Նման գործառույթով օժտված են նաև ինքնուրույն ընթերցանության գրքի ձևն ու չափը:

Ուշագրավ է, որ ինքնուրույն ընթերցանությունը նպաստում է նաև կրտսեր դպրոցականի հետազոտական կարողությունների, քննադատական մտածողության զարգացմանը: Ուսուցիչների կարծիքով՝ ինքնուրույն ընթերցանությունը հաճախ ինքնուրույն պրպտումների առիթ է տալիս կրտսեր դպրոցականներին, նրանք լրա-

ցուցիչ նյութեր են փնտրում թեմայի, ստեղծագործության հեղինակի վերաբերյալ և այլն, որը հարստացնում է ճանաչողական գիտելիքները, ինքնուրույնաբար գիտելիքներ ձեռք բերելու կարողություններ է ձևավորում: Ինքնուրույն ընթերցանության դասի անցկացման ձևերից նախապատվությունը տրվում է քննարկումներով ընթերցանությանը, որը աշակերտներին կարծիքներ փոխանակելու հնարավորություն է տալիս:

Ինքնուրույն ընթերցանությունը երբեք չի կարող համեմատվել ֆիլմ կամ մուլտֆիլմ դիտելու հետ, բայց տվյալ թեմայի վերաբերյալ ֆիլմի կամ մուլտֆիլմի դիտումը ևս դրական նշանակություն է ստանում ընթերցանության նկատմամբ հետաքրքրություն առաջացնելու առումով: Հարկ է նկատել, որ ընթերցանության նկատմամբ սերը գալիս է նաև աշակերտի ընտանիքից: Այս հարցում հատկապես մեծ նշանակություն ունի երեխայի դաստիարակությունը:

Ինքնուրույն ընթերցանության դերն անգնահատելի է հատկապես կրտսեր դպրոցականի բառապաշարի համալրման առումով, ինչն էլ կապակցված խոսքի զարգացման միջոց է: Ուսուցիչները հաճախ կարողանում են նաև քերականական նյութերի ուսուցումը կապել ընթերցվող բնագրերի, ստեղծագործությունների հետ:

Այսպիսով՝ հարցումներն ու հետազոտությունները ցույց են տալիս, որ ինքնուրույն ընթերցանությունն անմիջականորեն առնչվում է երեխայի զարգացմանը, անհատականության ձևավորմանը, մտածողության զարգացմանն ու ճանաչողական գիտելիքների հարստացմանը:

3 ԴԱՍԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Առարկա- Մայրենի, ինքնուրույն ընթերցանություն

Դասարան- 2-րդ

Դասի թեման- «Արդյոք հավիկը հիմա՞ր է» (պատմվածք), Ա.Վարդանյան

Դասի տիպը- նոր նյութի հաղորդում

Մեթոդներ, հնարներ- կանխատեսման մեթոդ, վեննի դիագրամ, դիդակտիկ խաղեր

Դասի նպատակը.

- սահուն, գրական շեշտի և առոգանության պահպանումով բարձրաձայն ընթերցելու կարողությունների ձևավորում-զարգացում,
- կերպարների բնութագրում, պատմվածքը ստեղծագործաբար շարունակելու կարողության ձևավորում,
- պատմվածքի հիմնական մտքի ձևակերպում ու դրա նկատմամբ որոշակի վերաբերմունք արտահայտելու կարողության ձևավորում,
- վայրի և ընտանի կենդանիների մասին ճանաչողական գիտելիքների հաղորդում (ձեռքբերում)

Դասի կահավորումը- պաստառ պատմվածքի նկարներով, ընտանի և վայրի թռչունների նկարներ, վեննի դիագրամի համար նախատեսված պաստառ իր քարտերով, բառային քարտեր, դասագիրք, թուղթ և գրիչ

Դասի ընթացքը

<u>Խթանման փուլ</u>

Այս փուլի հիմնական նպատակներից են՝ նոր նյութի վերաբերյալ բացահայտել սովորողների գիտելիքները, քննարկվելիք նյութի մեջ ներգրավելով ակտիվացնել աշակերտներին, նրանց մոտ ձևավորել գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու ձգտում: Այդ նպատակով այս փուլում անցկացրել եմ նախապատրաստական զրույց:

Աշակերտների ուշադրությունը կենտրոնացնելով նոր նյութի ճանաչողական կողմի վրա՝ անցկացրել եմ զրույց թռչունների մասին հարց ու պատասխանի տեսքով:

Աշակերտներից ոմանց համար այն նորություն էր և նրանք նույնիսկ զարմացան: Եվ նրանց ցուցադրեցի ընտանի թռչունների (հավ, բադ, սագ, հնդկահավ) ու վայրի թռչունների (ագռավ, արծիվ, անգղ, բու…) նկարները: Եվ երեխաներին առաջարկեցի նշել նրանց անունները:

Միասին այն թվարկելուց հետո երեխաներին առաջարկեցի շատ հետաքրքիր խաղ-վարժություն:

Ճանաչի՛ր և ճի՛շտ միացրու: Այս վարժությունը ճիշտ կատարելու համար գրատախտակին փակցրել էի թռչուններին բնորոշ վերջույթները, կտուցներն ու կատարները և գրել էի դրանց անունները: Երեխաները պետք է կռահեին, թե այդ պատկերներից որն ինչ է: Ըստ այդմ նրանք կկարողանային սլաքներով ճիշտ միացնել:

Թաթ կատար ճանկ կտուց

Այս բնույթի վարժություններն ունեն ոչ միայն բառապաշարի հարստացման նպատակ և արժեք, այլև զննականությունը կապահովի ճանաչողական գիտելիքների յուրացումը:

Երեխաները մեծ ակտիվությամբ ու հետաքրքրությամբ այն կատարեցին:

Այնուհետև խոսեցինք նաև այն մասին, թե վայրի և ընտանի թռչուններն ինչո՞վ են տարբերվում միմյանցից:

Պատասխանները լսելուց հետո ներկայացրեցի, թե ինչով են տարբերվում վայրի և ընտանի թռչունները:

Մեծ է հանելուկի ճանաչողական արժեքը: Հանելուկի պատասխանը գուշակելու համար երեխան պետք է կարողանա հիշել տվյալ թռչունի մասին իր ունեցած գիտելիքները, դրանք համեմատել, համադրել, ընդհանրացնել և կատարել եզրահան-գում՝ գուշակելով թռչունը և անվանելով այն:

Նոր ուսումնական նյութի յուրացումն արդյունավետ դարձնելու համար աշակերտներին առաջադրեցի գուշակելու հանելուկներ.

Կա մի թռչուն բարձրաթռիչ,

Կորակտուց և գիշատիչ,

Ե՛վ ուժեղ է, և՛ սրատես,

Մագիլները՝ թրերի պես:

(բազե)

Ձվից ելնում քըչփչան են,
Ձու են ածում կըչկչան են:

(հավ)

Երեխաները միանգամից գուշակեցին հանելուկների պատասխանները: Որից հետո մի փոքր տեղեկություն հաղորդեցի նաև բազեի և հավի մասին:

Այնուհետև կատարեցինք <<5 բոպեանոց ազատ շարադրանք>> մեթոդական հնարը: Երեխաներին առաջարկեցի պատին փակցված պաստառի նկարների շուրջ հորինել փոքրիկ պատմություն՝ այն վերջում համեմատելու բնագրի հետ:

Երեխաների միտքը և երևակայությունն անսահման են, հորինած պատմությունները՝ հետաքրքիր ու անսովոր: Կարևոր է, որ երեխան կարողանա սեփական միտքը ձևակերպել՝ գտնել համապատասխան բառեր, արտահայտություններ, ապա գրանցել, իսկ հետո՝ ներկայացնել:

Երեխաները պակաս հետաքրքրությամբ չեն լսում իրենց հասակակիցների հորինած պատմություններն ու հեքիաթները: Երեխաներին հասակակիցների ստեղծագործություններն ավելի են հետաքրքրում ու զարմացնում, ծիծաղեցնում ու ոգևորում: Հորինած պատմությունը գրելուց հետո երեխան այն ներկայացնում է՝ կարդում, երբեմն էլ նաև նկարում:

Այս առաջադրանքն էլ կատարելուց հետո վերլուծեցինք նաև պատմվածքի վերնագիրը՝ *<<Արդյոք հավիկը հիմա՞ր է>>:*

<u>Իմաստի ընկալման փուլ</u>

Այս փուլի նպատակներից են՝ սովորողների մոտ հետաքրքրության աճի պահպանումը, տեղեկատվության ընկալման ինքնավերահսկման ապահովումը, նոր և հին տեղեկատվության շաղկապումը և իմացության նոր կառույցի ստեղծումը:

Այս փուլի համար օգտագործել եմ «Կանխատեսումների աղյուսակ» մեթոդը: Բնագիրը բաժանել եմ հատվածների և յուրաքանչյուր հատվածի ընթերցումից հետո առաջարկել աշակերտներին պատասխանել հետևյալ հարցերին:

Ի՞նչ եղավ	*Ի՞նչ կլինի հետո*	*Ինչու՞ եք այդպես կարծում*

Յուրաքանչյուր հատված ընթերցելուց հետո փորձում էի տեսնել աշակերտներից ու՞մ կանխագուշակումներն էին բնագրի հաջորդ հատվածին մոտ: Այս աշխատանքի նպատակն այն է, որ երեխաները լինեն ուշադիր և հետաքրքրված կարդան մնացած հատվածները: Ընթացքում կատարելով նաև անծանոթ բառերի բացատրություն:

Խաղ. <<Վանկերից բառեր ստանանք>>

/ըստ Ջ. Գյուլամիրյանի <<Խաղալով սովորենք>>գրքի/

Խաղի նպատակը. Ամրակայել վանկերից բառեր կազմելու և դրանք կարդալու երեխաների կարողությունները, մշակել զույգերով աշխատելու, համագործակցային կարողություններ:

Խաղի ընթացքը: Աշակերտները բաժանվում են խմբերի: Յուրաքանչյուր խմբի մեկական ծրար է տրվում:

Առաջադրանք: Ծրարի մեջ գտնվող վանկերով կազմել բառեր և կարդալ: Հաղթում է այն խումբը, որը արագ կկազմի բառերը և ճիշտ կկարդա:

Օրինակ՝





Աշխատանքները ստուգելուց պարզ դարձավ, որ երեխաներից շատերը դժվարացել են վանկատված բառերը ճիշտ գրել: Այսինքն՝ բառի գրության ժամանակ գաղտնավանկի ը-երը նույնությամբ գրել էին:

Սխալները շտկելուց և բացատրելուց հետո անցանք հաջորդ փուլին:

Կշռադատման փուլ

Այս փուլի նպատակն այն է, որ սովորողը նոր ստացած տեղեկատվությունը կարողանա արտահայտել իր բառերով և ձևակերպումներով, նոր գիտելիքների միաձուլում ունեցածին և դրանց աստիճանական ինտեգրում:

Կշռադատման փուլում Վեննի դիագրամի միջոցով աշակերտները բնութագրեցին բազեին և հավիկին:



Այնուհետև հարցերի միջոցով ամփոփեցինք սովորածը:

Հարցեր

1) Ի՞նչ եք կարծում, արդյոք հավիկը հիմա՞ր էր: /Մենք դասը սկսելուց առաջ քննարկեցինք այս հարցը/

2) Ե՞րբ են ասում <<հավի խելք>>, <<հիմար, ինչպես հավը>> արտահայտությունները:
3) Ի՞նչ եք կարծում, բազեն ագա՞հ էր, թե՞ անմեղ: Ինչու՞: Հիմնավորե՛ք ձեր պատասխանը:

4) Ի՞նչ եղավ բազեի հետ: Փորձե՛ք շարունակել պատմությունը:

Պատասխանները հետաքրքիր էին և յուրօրինակ: Օրինակ, այն հարցին, թե ի՞նչ եք կարծում, բազեն ագա՞հ էր, թե՞ անմեղ, գրեթե բոլորը մեղադրեցին բազեին՝ նրան համարելով ագահ թռչուն: Բայց գտնվեց մեկ աշակերտ, ով բազեին համարեց անմեղ՝ իր պատասխանը հիմնավորելով այսպես. <<ի՞նչ աներ խեղճ թռչունը, չէ՞ որ սոված էր, պետք է մի բան ուտեր, թե չէ>>:

Ավելի ուշագրավ էր նաև Տաթևիկի պատասխանը.

-Ես մտածում եմ, որ երկուսն էլ շատ խեղճ վիճակում են հայտնվել: Մի կողմից բազեն քաղցած էր, պետք է մի բան ուտեր, դա կլինեին ճուտիկները, թե մեկ այլ կենդանի, միևնույն է բազեն սոված չէր մնալու: Մյուս կողմից խեղճ մայրիկը, ով իր կյանքի գնով պաշտպանեց իր ձագուկներին: Ես կարծում եմ, որ չպետք է ոչ մեկին մեղադրել, երկուսն էլ անմեղ էին:

Վերջում աշակերտները հանգեցին այն մտքին, որ մայրական բնազդը ամեն ինչից վեր է: Չնայած, որ հավը համարվում է հիմար թռչուն, միևնույնն է, նրա մայրական բնազդը արթնացավ ճիշտ ժամանակին՝ ամեն գնով պաշտպանելու իր սիրասուն ձագերին: Սա էլ բնազրի հիմնական գաղափարն էր:

Տնային հանձնարարություն: Դասը հանձնարարեցի սովորել կարդալ: Ինչպես նաև հանձնարարեցի, որպեսզի երեխաները փոխեն պատմվածքի կա՛մ ընթացքը, կա՛մ էլ վերջաբանը:

Կարող եմ փաստել, որ դասը հասավ իր նպատակին: Այն, ինչ ի սկզբանե դրված էր դասն իրականացնելիս, ծառայեց իր նպատակին: Աշակերտները ճիշտ և դիպուկ բութագրեցին կերպարներին, ստեղծագործաբար և շատ հետաքրքիր շարունակեցին պատմվածքը, ձևակերպեցին պատմվածքի հիմնական միտքն ու վերաբերմունք արտահայտեցին դրա նկատմամբ, ստացան ճանաչողական գիտելիքներ վայրի և ընտանի թռչունների մասին: Միակ խնդիրն այստեղ ընթերցանության ոչ ճիշտ կանոններն էին: Նրանցից շատերը չէին կարողանում սահուն, գրական շեշտի և առոգանության պահպանումով ընթերցել պատմվածքը: Այստեղ ուսուցիչը մեծ աշխատանք ունի կատարելու:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2-րդ դասարանում անցկացվող ինքնուրույն ընթերցանության դասաժամը ցույց է տալիս, որ արտադասարանական ընթերցանության ճիշտ կազմակերպումն ու դասարանային ընթերցանության ժամանակ համապատասխան մեթոդների գործադրումը ոչ միայն հետաքրքրություն է առաջացնում ընթերցանության նկատմամբ, ձևավորում է կրտսեր դպրոցականի արժեհամակարգը ու խոսքը, այլև նպաստում է աշակերտների ճանաչողական գիտելիքների հարստացմանը, կարևոր դերակատարում ունենում աշակերտների մտածողության, տրամաբանության զարգացման գործում:

Աշակերտների հարցումից ստացվող տվյալների վերլուծությամբ պարզ է դառնում, որ՝ա) ընթերցանությունը որոշ չափով նվազեցնում է համացանցի ունեցած վնասակար ազդեցությունը, բ) աշակերտներին ընթերցանության ժամանակ գրավում են նաև գրքի ձևն ու չափը, նկարազարդումները, պատկերները, որոնք հետաքրքրություն են առաջացնում ընթերցանության նկատմամբ:

Ուսուցիչների հարցաթերթիկից ստացած տվյալները փաստում են, որ ինքնուրույն ընթերցանության դասաժամերի անցկացումը կարևոր նշանակություն ունի: Այս առումով ուսուցիչները նշանակություն են տալիս բնագրերի ընտրությանը և դասարանային ու արտադասարանային ընթերցանության կապին: Այս դեպքում ինքնուրույն ընթերցանությունը հաճախ վերածվում է հաճելի զբաղմունքի:

Այսպիսով՝ հետազոտությունը թույլ տվեց գալու հետևյալ եզրակացությունների.

1. Մայրենիի դասընթացում կարևորագույն դեր է կատարում ինքնուրույն ընթերցանության բաղադրիչը. այն ունի սովորողի ընթերցողական կարողությունները զարգացնելու և ընթերցասիրություն ձևավորելու կարևոր նշանակություն:

2. Ինքնուրույն ընթերցանությունը մեծապես նպաստում է սովորողի ճանաչողական գիտելիքների հարստացման և արժեհամակարգի ձևավորման գործընթացին, ուստի ինքնուրույն ընթերցանության համար նախատեսված ստեղծագործությունների վերլուծությունն ու քննարկումը պետք է կազմակերպվի նաև այդ նպատակի առավելագույն արդյունավետ իրականացման հաշվառմամբ:

3. Ճանաչողական գիտելիքների հարստացման արդյունավետ կազմակերպման համար կարևոր է ինքնուրույն և դասարանային ընթերցանությունների միջև կապի

ստեղծումը. եթե ինքնուրույն ընթերցանության համար հանձնարարվող գրականությունն իր ճանաչողական կամ դաստիարակչական բովանդակությամբ անմիջականորեն առնչվում է արդեն ուսումնասիրված կամ զուգահեռ ուսումնասիրվող թեմաների հետ, լրացնում է դրանք, ապա լրացուցիչ հնարավորություն է ընձեռնվում ուսուցչին՝ առավել ընդգրկուն և խորը դարձնելու քննության առնված հարցերի ուսուցման գործընթացը:

4. Ինքնուրույն ընթերցանությունը նպաստում է նաև աշակերտի բառապաշարի հարստացմանն ու կապակցված խոսք կառուցելու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Տեր-Գրիգորյան Ա.,** Ընթերցանության մեթոդիկա, Երևան, 1978:

2. **Տեր-Գրիգորյան Ա.,** Արտադասարանային ընթերցանությունը տարրական դասարաններում, մեթոդական ցուցումներ, Երևան, 1973:

3. **Ավագյան Լ.**, Ինքնուրույն ընթերցանությունը որպես կրտսեր դպրոցականի մտածողության զարգացման միջոց, «Մանկավարժության զարգացման հիմնախնդիրները» տարածաշրջանային միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2015:

4. **Գալստյան Ա., Բալայան Ա. և ուրիշներ**, Ինքնուրույն ընթերցանության ձեռնարկների մեթոդական կառույցը՝ որպես սովորողների հասկանալով կարդալու կարողության ձևավորման միջոց, Տարրական դպրոցի զարգացման հեռանկարները 21-րդ դարում, Երևան, 2014:

5. **Գյուլամիրյան Ջ.,** Տարրական դասարաններում արտադասարանական ընթերցանության կազմակերպման խնդիրները և մեթոդները, <<Նախաշավիղ>>, 2001, N 1: